Վ.ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստում

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա

# ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԵՋ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅԱՆ, ՄՈՏԻՎԱՑԻԱՅԻ ԽԹԱՆՈՒՄԸ ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

**Ուսուցիչ՝** Վ. Պողոսյան

**Դպրոց՝** Ղ. Փարպեցու անվան միջն. դպրոց

**Ղեկավար՝** մ.գ.թ., դոցենտ Ն. Պողոսյան

ԵՐԵՎԱՆ 2022

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Լեզուներ սովորելու գործում հաջողության հասնելու համար մոտիվացիան ամենակարևոր պայմանն է: Այն հիմնական շարժիչ ուժն է, որն ապահովում է սովորողների ներգրավվածությունը դասարանային աշխատանքներին: Մոտիվացիան բնութագրվում է առաջին հերթին ուսուցանվող առարկայի նկատմամբ սովորողների հետաքրքրությամբ, ինչն էլ նպաստում է ուշադրության կենտրոնացմանը, ուժեղացնում է դասի ընթացքում ստացված տպավորությունները, դրանով իսկ նպաստելով նրանց ինքնուրույնության զարգացմանը:

**Հետազոտության նպատակն է.**

Ուսումնասիրելով առկա մանկավարժահոգեբանական գրականությունը և հանրակրթական դպրոցում առկա փորձն ու դրվածքը՝ **մշակել և ներկայացնել** սովորողների ուսումնառության մոտիվացիան խթանող և ինքնուրույնությունը զարգացնող առաջադրանքների փաթեթ անգլերենի **նախագծահեն**, **բովանդակահեն** և **առաջադրանքահեն** ուսուցման մեթոդների կիրառմամբ:

Ըստ նպատակի՝ առաջադրվել են հետևյալ **խնդիրները.**

- **ներկայացնել** սովորողների ուսումնառության մոտիվացիայի խթանումը և ինքնուրույնության զարգացումը անգլերենի **նախագծահեն**, **բովանդակահեն** և **առաջադրանքահեն** ուսուցման գործընթացում զանազան գործնական առաջադրանքների միջոցով,
- **իրականացնել** փորձարարական ուսուցում և հարցում՝ ուղղված աշակերտների ուսումնառության մոտիվացիայի և ինքնուրույնության զարգացման ստուգմանը անգլերենի դասաժամերին և կատարել ստացված արդյունքների վիճակագրական վերլուծություն:

Վերոնշյալ խնդիրների լուծման նպատակով կիրառվել են հետևյալ **մեթոդները.**

- ուսումնական գործընթացի դիտարկում,
- փորձարարական ուսուցում,
- արդյունքների վիճակագրական վերլուծություն:

# ԳԼՈՒԽ 1

# ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԵՋ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅԱՆ, ՄՈՏԻՎԱՑԻԱՅԻ ԽԹԱՆՈՒՄԸ ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

## 1.1 Սովորողների ուսումնառության մոտիվացիայի և ինքնուրույնության խթանումը անգլերենի **նախագծահեն ուսուցման** գործընթացում

Սովորողների մոտ ուսուցման գործունեության դրական շարժառիթների ձևավորման և համախմբման գործընթացը կոչվում է **ուսուցման գործունեության մոտիվացիա**: Դասական դպրոցական կրթության ներկա վիճակը բնութագրելով՝ գրեթե բոլոր հեղինակները՝ ուսուցիչներից մինչև գիտնականները և կրթական մարմինների աշխատակիցները, բացասական միտումների շարքում անպայման նշում են այնպիսի երևույթները, ինչպիսիք են կրթական գործունեության մեջ դպրոցականների շարժիչ և ճանաչողական ազդեցության նվազումը, նրանց ֆիզիկական և մտավոր զարգացման դանդաղեցումը, հոգե-հուզական սթրեսի բարձր մակարդակը և դասապրոցեսի շրջանակներում ինքնուրույնության և ինքնաբուխության նվազումը:

Այսօր կրթության և դաստիարակության ոլորտում ամենասուր խնդիրները կապված են կամ վարքի բացասական մոտիվացիայի, այսինքն՝ բացասական սոցիալական միջավայրի ազդեցության, կամ դպրոցականների հիմնական զանգվածի դեմոտիվացիայի հետ, հետևաբար, հիմնական այն ցուցանիշների նվազման հետ ,որը վերաբերվում է նրանց կրթությանը և դաստիարակությանը:

Առանց չափազանցության, **սովորողների մոտիվացիայի** ձևավորումը կարելի է անվանել ժամանակակից դպրոցի կենտրոնական խնդիրներից մեկը, ուստի ուսուցման շարժառիթների ձևավորման մակարդակը կրթական հաստատության արդյունավետության ցուցանիշներից մեկն է [Ковылева 2009: 1]:

Ուսումնական գործընթացի դրական մոտիվացիայի ձևավորման և սովորողներին ինքնուրույնության մղելու վրա ազդող հիմնական գործոններն են.

- ուսումնական նյութի բովանդակություն
- ուսուցչի և աշակերտների հաղորդակցման ոճը
- կրթական - ճանաչողական գործունեության բնույթն ու մակարդակը [Ковылева 2009: 1]:

Լեզվակրթության ժամանակակից մարտահրավերներին դիմակայելու համար ուսուցիչները պետք է օգտագործեն անգլերենի ուսուցման համապատասխան մեթոդներ, որոնք պետք է խրախուսեն աշակերտներին օգտագործել լեզուն՝ շեշտը դնելով կենդանի շփման միջավայրում հաղորդակցական նպատակների վրա, այլ ոչ թե կենտրոնանալ միայն ճշգրտության վրա, ինչպես ավանդական ուսուցման դեպքում: Այլ կերպ ասած, սովորողների ն պետք է խրախուսել, մոտիվացնել ավելի շատ շփվել, քան անհանգստանալ քերականական կանոնների համար, երբ նրանք օգտագործում են անգլերենը հաղորդակցական նպատակներով: **Նախագծի** վրա հիմնված ուսուցումը այս ձևաչափով համապատասխանում է անգլերենի ուսուցման կարիքները բավարարելուն,այսինքն նախագիծը թույլ է տալիս առավել հետաքրքրիր կերպով ուսուցանել թեման, լիարժեք ինտեգրելով սովորողներին ուսուցման գործընթացում և նրանց մղելով ինքնաբուխության ձևավորում է նաև ինքնուրույնությունը ինչը պակաս կարևոր չէ: PBL-ը պարզապես սահմանվում է որպես «ուսուցողական մոտեցում, որը աշակերտներին ներկայացնում է լուծման կամ մշակման ենթակա խնդիրներ» [Moss & Van Duzer 1998]:

Այն առաջին անգամ հանրաճանաչություն ձեռք բերեց քսաներորդ դարի սկզբին, երբ Ջոն Դյուի կողմից սահմանվեց որպես «սովորել՝ գործելով» իր «Կրթություն և ժողովրդավարություն» աշխատությունում [Ջոն Դյու 1916]:

PBL-ը տարբերվում է ավանդական ուսուցումից, քանի որ այն ընդգծում է ուսումնառությունը աշակերտակենտրոն, միջառարկայական և ինտեգրված գործունեության միջոցով: Մասնավորապես, PBL-ի գործունեությունը կարելի է բնութագրել հետևյալ կերպ [Fried-Booth 1997; Simpson 2011].

- ուսուցիչը դառնում է օգնող կամ մարզիչ, այսինքն՝ խրախուսում է աշակերտների միջև համագործակցությունը, տանում է դեպի ինտեգրման լեզուն և տեղեկատվություն է տրամադրում բազմաթիվ աղբյուրներից. օրինակ՝ թեմային նվիրված կայքեր, գրականություն.
- աշակերտներին թույլ է տրվում ցույց տալ բովանդակության վերաբերյալ իրենց ըմբռնումը վերջնական արդյունքի միջոցով (օրինակ՝ բանավոր ներկայացում, ցուցադրություն կամ բեմական ներկայացում).
- ստեղծվում են կամուրջներ՝ օգտագործելով անգլերենը դասարանում և առօյա կյանքի ենթատեքստերը:

Առավել կարևոր է, որ PBL-ն ուղված է և՛ գործընթացին, և՛ արդյունքին: Սովորողները հնարավորություն ունեն օգտագործելու մի քանի հմտություններ (օրինակ՝ խնդիրների լուծում, ստեղծագործականություն, թիմային, լեզվական աշխատանք) աշխատանքային տարբեր փուլերում, հետևաբար աշխատանքային և լեզվական հմտությունները զարգանում են [Brunetti, Petrell, Sawada 2003; Solomon 2003]:

Այսպիսով, PBL-ը խթանող մոտիվացիա է լեզու սովորողների համար, այն սովորաբար հանգեցնում է վստահության, ինքնագնահատականի և ինքնավարության ձևավորմանը, [Fried-Booth 1997; Simpson 2011]: Այսինքն՝ բարելավում է սովորողների լեզվական հմտությունները, բովանդակության ուսուցման և ճանաչողական կարողությունները, տվյալ ուսումնական մեթոդը թույլ է տալիս **ինքնուրույն** զարգացնել լեզվական կարողությունները: Նախագծային աշխատանքը նախատեսված է ավանդական դասավանդման մեթոդները լրացնելու համար:

1.2 Սովորողների ուսումնառության մոտիվացիայի և ինքնուրույնության խթանումը անգլերենի **բովանդակահեն ուսուցման** գործընթացում

Հաջորդիվ կներկայացնենք աշակերտների ուսումնառության մոտիվացիայի և ինքնուրույնության խթանումը անգլերենի **բովանդակահեն** ուսուցման գործընթացում:

Ուսուցումը բարելավվում է մոտիվացիայի ավելացման և համատեքստում բնական լեզվի ուսումնասիրության միջոցով: Երբ սովորողները հետաքրքրված են որևէ թեմայով,

նրանք մոտիվացված են հաղորդակցվելու լեզուն ձեռք բերելու համար: Այսինքն՝CLIL-ը հիմնված է լեզվի յուրացման, այլ ոչ թե հարկադիր ուսուցման վրա: Լեզուն երևում է իրական կյանքի իրավիճակներում, այսինքն, թե երբ ուսանողները կարող են սովորել լեզուն: Սա բնական լեզվի զարգացում է, որը հիմնված է ուսուցման այլ ձևերի վրա:

CLIL-ը երկարաժամկետ ուսուցում է: Սովորողները զարգացնում են անգլերենի սահունությունը՝ օգտագործելով անգլերենը տարբեր նպատակներով հաղորդակցվելու համար[3]:Այս դեպքում ընթերցանությունը կարևոր հմտություն է հանդիսանում:
CLIL-ն օգնում է.

- ներկայացնել ավելի լայն մշակութային համատեքստ.
- պատրաստվել միջազգայնացմանը.
- մուտք գործել միջազգային հավաստագրում և ընդլայնել դպրոցի պրոֆիլը.
- բարելավել ընդհանուր և հատուկ լեզվական իմացությունը.
- պատրաստվել հետագա ուսումնասիրություններին և/կամ աշխատանքային կյանքին.
- մշակել բազմալեզու հետաքրքրություններ և վերաբերմունք.
- բարձրացնել աշակերտի մոտիվացիան [3]:

CLIL-ը հիմնված է բառապաշարի վրա, այսինքն՝ խրախուսում է սովորողներին կարդալիս լեզվական հմտություններ ձեռք բերման հարցում:

Կասկածից վեր է, որ լեզու սովորելը և լեզվի միջոցով սովորելը միաժամանակյա գործընթացներ են, սակայն CLIL-ի ներդրումը պահանջում է դասասենյակի և ուսուցչի ավանդական հասկացությունների վերաիմաստավորում:

1.3 Սովորողների ուսումնառության մոտիվացիայի և ինքնուրույնության խթանումը անգլերենի **առաջադրանքահեն ուսուցման** գործընթացում

Իսկ՝ ահա, անգլերենի **առաջադրանքահեն** ուսուցումը անգլերենի դասավանդման հաղորդակցական մեթոդներից մեկն է: Առաջադրանքների վրա հիմնված ուսուցման մեթոդի հիմնական գաղափարը սովորողին հաղորդակցական իրավիճակում դնելն է և նրան խնդրելը՝ կատարել հաղորդակցական առաջադրանք: Իրականում հաղորդակցական իրավիճակը

կյանքի ցանկացած իրավիճակ է, որտեղ օգտագործվում է խոսք, ուստի այն ներառում է փոքրիկ զրույցներ դասընկերների հետ: Բառապաշարն ու քերականությունը միշտ չէ, որ առաջադրանքի ուշադրության կենտրոնում են: Ենթադրվում է, որ քերականական կառուցվածքները և բառապաշարն արդեն յուրացվել են, նախկինում օգտագործված դասագրքերի օգնությամբ, և այժմ պետք է կատարելագործել հմտությունները: Նման առաջադրանքի կատարման արդյունավետությունը գնահատվում է կատարման արդյունքով, ասյսինքն, թե որքանով է հասանելի հաղորդակցման նպատակը:

Ուսուցման այս մոտեցումն ուշադրությունը կենտրոնացնում է բուն առաջա - դրանքի վրա, այլ ոչ թե քերականական կամ բառային կառույցների վրա: Նպատակը առաջադրանքը կատարելն է: Իհարկե, առաջադրանքը հաջողությամբ կատարելու համար աշակերտները պետք է ճիշտ օգտագործեն խոսքը և փոխանակեն իրենց մտքերը: Այսպիսով, լեզուն դառնում է հաղորդակցման գործիք, որի նպատակն է օգնել աշակերտին հաջողությամբ հաղթահարել առաջադրանքը:

Նման առաջադրանքի կատարման արդյունավետությունը գնահատվում է կատարման արդյունքով, ասյսինքն, թե որքանով է հասանելի հաղորդակցման նպատակը: Տարբեր ուսուցիչներ առաջադրանքահեն ուսուցման մեթոդը կիրառում են տարբեր ձևերով: Ոմանք այն ինտեգրում են գոյություն ունեցող ուսումնական ծրագրին, ոմանք այն ամբողջությամբ փոխարինում են ուսումնական ծրագրով, ոմանք այն օգտագործում են որպես ավանդական դասարանային աշխատանքի հավելում:

Սա սովորողներին ներգրավում է ուսումնասիրվող թեմայի մեջ և բարելավում է նրանց լեզվական հմտությունները, ինչը կարող է շատ օգտակար լինել: Այնուհետև ուսուցիչը բացատրում է, թե որն է առաջադրանքը և կազմակերպում է սովորողների գործունեությունը

Ենթադրենք, սովորողներին հանձնարարված է ռեստորանում սեղան պատվիրել: Սկզբում ուսուցիչը կարող է օգնել սովորողներին և ցույց տալ տեսանյութ, որտեղ լուծվում է նման հաղորդակցական իրավիճակ: Կարող են նաև քննարկվել բառեր և կառուցվածքներ, որոնք օգտակար կլինեն առաջադրանքը կատարելու համար: Այս փուլի

նպատակն է սովորողներին նախապատրաստել առաջադրանքին: Երկրորդ փուլում սովորողները առաջադրանքը կատարում են զույգերով կամ խմբերով: Այնուհետև նրանք կարող են ներկայացնել իրենց գաղափարները մյուս սովորողներին: Այս փուլում սխալները կարևոր չեն: Ուսուցիչը աջակցություն է ցուցաբերում և վերահսկում է առաջադրանքների ճիշտ կատարումը: Սովորողները ստանում են հստակ հրահանգներ, որոնց նրանք կհետևեն առաջադրանքը կատարելիս: Աշակերտները կատարում են առաջադրանքը՝ կիրառելով առկա գիտելիքները: Երբեմն սովորողներն իրենք են ընտրում բառապաշարը և քերականական կառուցվածքը:

Առաջադրանքահեն ուսուցման գործընթացքում շեշտը միշտ դրվում է ինքնաբուխության վրա, ոչ թե խոսքի ճշգրտության: Այստեղ ուսուցչի համար կարևոր է առաջադրանքը կատարելու ժամանակ սխալները «չնկատել»: Ուսուցիչը կարող է նշումներ անել, հետո անդրադառնալ, բայց ոչ մի դեպքում նա չպետք է միջամտի առաջադրանքի կատարմանը՝ ուղղումներով:

Անգլերենի առաջադրանքահեն ուսուցման գործընթացում սովորողներն ազատ են ընտրելու իրենց կողմից օգտագործվող բառապաշարը ինչն էլ նպաստում է նրանց մեջ ինքնուրույնության ձևավորմանը: Առաջադրանքահեն ուսուցման առավելությունը ավանդական մոտեցումների նկատմամբ այն է, որ այն սովորողներին թույլ է տալիս կենտրոնանալ իրական հաղորդակցության վրա և կատարել ինքնուրույն որոշումներ:

Այսպիսով, ուսուցման գործընթացում դիտարկելով մոտիվացիան խթանող և սովորողների մեջ ինքնուրույնութուն զարգացնող երեք մեթոդները՝ **նախագծահեն**, **բովանդակահեն** և **առաջադրանքահեն**, կարող ենք փաստել այն մասին, որ կիրառելով վերը նշված մեթոդները սովորողներին պետք է խրախուսել, մղել ավելի շատ շփման և ստեղծել այնպիսի միջավայր, որտեղ նրանք չեն վախենա կատարել քերականական սխալներ, երբ նրանք օգտագործում են անգլերենը հաղորդակցական նպատակով: Այդ մեթոդները զարգացնում են սովորողների քննական և ստեղծարար մտածողությունը՝ տալով ինքնուրույն աշխատելու հնարավորություն և ուսուցման գործընթացքում շեշտը միշտ դրվում է սովորողների ինքնաբուխության վրա:

# ԳԼՈՒԽ 2

## ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄ՝ ՈՒՂՂՎԱԾ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՄՈՏԻՎԱՑԻԱՅԻ ԵՎ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳՄԱՆԸ ԱՆԳԼԵՐԵՆԻ ԴԱՍԱԺԱՄԵՐԻՆ:

2.1 Փորձարարական ուսուցում իրականացված նախագծահեն, բովանդակահեն և առաջադրանքահեն ուսուցման մետոդների շրջանակում:

Գաղտնիք չէ, որ ժամանակակից աշխարհում ընթացող փոփոխություններն առաջ են քաշում նորագույն մարտահրավերներ, որոնք իրենց արտացոլումն են գտնում նաև կրթության ոլորտում, և առավելապես, դասավանդման գործընթացում՝ խրախուսելով մանկավարժներին լինել առավել ստեղծագործ, ճկուն և նորարարական: Այս ամենից, բնականաբար, անմասն չի մնում նաև օտար լեզվի դասավանդումը՝ուսուցչի առաջ խնդիր դնելով դասապրոցեսը դարձնել առավել աշակերտակենտրոն ու ինտերակտիվ: Նախագծահեն, բովանդակահեն և առաջադրանքահեն մեթոդներվ գործնական առաջադրանքների մշակումից հետո առաջացավ կարիք փորձարկել դրանք հանրակրթական դպրոցում՝ պարզելու դրանց արդյունավետությունը աշակերտների ուսումնառության մոտիվացիայի խթանման տեսանկյունից: Այդ նպատակով որպես հետազոտության մեթոդ ընտրվեց փորձարարական ուսուցումը, քանի որ մեր կողմից ընտրված մեթոդները հնարավոր չէ իրականացնել անգլերենի մեկ դասի ձևաչափով:

Փորձարարական ուսուցման նպատակը.

- պարզել ընտրված մեթոդներով մշակված առաջադրանքների արդյունավետությունը սովորողների ուսումնառության մոտիվացիայի և ինքնուրույնության խթանման գործընթացում,
- ստուգել անգլերեն լեզվանյութի յուրացման արդյունավետությունը ներդրված մեթոդների շրջանակներում

Հաջորդիվ քայլ առ քայլ դիտարկվում է **նախագծահեն** մեթոդի ներդրման և կատարման գործընթացը 10-րդ դասարանում:

**Թեմա՝** "Cultural Palette" **«Մշակութային Գունապնակ»**

**Դասարան՝** 10- րդ

**Դասի տիպը՝** համագործակցային, գիտելիքների հմտությունների ձևավորման դաս:

**Դասի նպատակը՝**

- ընդլայնել և ամրապնդել գիտելիքներն ու հմտությունները տարբեր ոլորտներից ավելի բարդ և բազմամասնագիտական առաջադրանքի միջոցով,
- զարգացնել թեմայի շրջանակներում հաղորդակցական հինգ կարողունակությունները (ունկնդրումը, մենախոսությունը, ընթերցանություն, գրավոր խոսք, փոխներգործություն)
- զարգացնել աշակերտների կարողությունը՝ տարբերակելու, թե որ տեղեկատվությունն է հուսալի և որը՝ ոչ, ինքնավար ուսուցման, հետազոտության և տեղեկատվության որոնման համատեքստում,
- զարգացնել աշակերտների թիմային աշխատանքի կարողությունները,
- խթանել աշակերտների ինքնագնահատման և ինքնաքննադատության կարողությունների զարգացումը:

**Դասի ընթացքում կիրառվող մեթոդները և իրականացման եղանակները՝** փոխներգործուն, «մտագրոհ» մեթոդ, խմբային աշխատանք, ինքնուրույն ճանաչողական գործունեություն

**Անհրաժեշտ նյութեր և պարագաներ՝** պաստառներ, համակարգիչ, պրոյեկտոր, սահիկաշար

**Միջառարկայական կապեր՝** մշակույթ, հասարակագիտություն, բնագիտական առարկաներ, տնտեսագիտություն

**Ակնկալվող վերջնարդյունքներ.**

*Թեմայի ավարտին աշակերտը պետք է իմանա՝*

- թեմային առնչվող բառապաշարը,
- ներառված երկրների ավանդույթների մասին որոշ մանրամասներ,

*Թեմայի ավարտին աշակերտը պետք է կարողանա՝*

- կարդալ և հասկանալ երկրի ավանդույթների կարևորությունը,
- կատարել ինքնուրույն հետազոտություն՝ փորձելով վեր հանել առավել հետաքրքրաշարժ և ուշագրավ դրվագները,

- կատարել աշխատանքի և ժամանակի արդյունավետ դերաբաշխում,
- պատրաստ լինել առավել երկար նախագծերի, միջազգային մրցույթների (օրինակ՝ Technovation, Science for Girls) և սեփական ստարտափների նախագծմանը:

Աշակերտները նախագծում և ստեղծում են ներկայացվող երկրների ՝ Հայաստանի և Մեծ Բրիտանիայի պատմության, մշակույթի ու ավանդույթների գիրք: Աշակերտները նաև քայլ առ քայլ հրահանգներ են գրում իրենց գրքերի նմուշները վերարտադրելու համար:

**Նպատակային դրվագ**

Նախագծել յուրահատուկ գիրք, գրել և հրապարակել յուրաքանչյուր մասը պատրաստելու ցուցումները:

**Դասարանային գործունեությունը**

Ինչպես նախագծերի մեծ մասի դեպքում, հետևողական քայլերը ստեղծում են ինքնուրույն դասարանային միջավայր: Տվյալ նախագծի յուրաքանչյուր հանդիպում սկսվում էր մեծ խմբի հանդիպումով, որի ընթացքում քննարկվում էին արդեն կատարված աշխատանքներն՝ ըստ փուլորի: Աշակերտները գրում, նկարազարդում և հավաքում էին տեղեկություններ իրենց նախընտրած երկրի հետաքրքրություն ներկայացնող թեմաներով: Նրանք կարող էին ստեղծել մեկից ավելի գրքեր, և նրանք կարող են համագործակցել այլ աշակերտների հետ գրքեր ստեղծելու համար:

**Գնահատումը**

| | Գերազանց - 2 | Լավ – 1,5 | Բավարար -1 | Բարելավման կարիք կա -0,5 |
|---|---|---|---|---|
| Գրաֆիկական հնարների օգտագործում | Գրաֆիկական բոլոր տարրերը գրավիչ են և համապատասխանում են թեմային: | Որոշ տարրեր գրավիչ չեն, բայց համապատասխանում են թեմային: | Տարրերն ընդհանուր առմամբ գրավիչ են, բայց որոշները թեմային չեն համապատասխանում: | Մի քանի հնարներ գրավիչ չեն և շեղված են թեմայից: |
| Տառատեսկի/ տառաչափի ընտրություն | Տառատեսակն ու տառաչափը ճիշտ են ընտրված, ընթեռնելի են: | Տառաչափը պատշաճ ընտրված է, սակայն տառատեսակի գույնի և ձևի որոշակի անհամապատասխանություններ կան: | Տառատեսակի և տառաչափի ընտրության որոշակի թերացումներ կան: | Առկա են անհարթություններ, աշխատանքը դժվարընթեռնելի է: |
| Ուղղագրություն ու քերականությունը սահիկաշարում | Ուղղագրության ու քերականության սխալներ չկան: | Կան որոշ վրիպակներ, սակայն չկան քերականական սխալներ: | Չկան վրիպակներ, սակայն կան 1-2 քերականական սխալներ: | Կան 2-ից ավելի քերականական և ուղղագրական սխալներ: |
| Բանավոր ներկայացում | Թիմի անդամները խոսում են վարժ՝ ճիշտ տոնայնությամբ ու տեմպով, պահպանված են քերականական կանոնները, չեն օգտվում հուշաթերթիկից: | Թիմի անդամները խոսում են վարժ՝ տոնայնության կամ տեմպի որոշակի շեղումներով: Քերականական կանոնները հիմնականում պահպանված են, սակայն երբեմն օգտվում են հուշաթերթիկից: | Թիմի անդամների խոսքը հասկանալի է և վարժ, սակայն առկա են քերականական սխալներ: Հաճախ օգտվում են հուշաթերթիկից: | Խոսքը կցկտուր է, առկա են բազմաթիվ սխալներ և մեծամասամբ հիմնվում են հուշաթերթիկի վրա: |
| Սխալները խոսքում | 0-1 | 2-5 | 6-8 | 9-10 |

Հաջորդիվ ներկայացվում է **բովանդակահեն մեթոդի** օգնությամբ կազմակերպված դասի նկարարագիրը: Տվյալ մեթոդի արդյունավետ կիրառման համար որպես նորարական մոտեցում օգտագործել ենք հայկական արտադրության “Arvest” սեղանի խաղը: “Arvest”-ը խաղ է բոլոր նրանց համար, ովքեր հետաքրքրված են արվեստով, ինչպես նաև այն հնարավություն է տալիս հասկանալ յուրաքանչյուր ստեղծագործության

նախապատմությունը, վերլուծել արվեստը, սովորել անվանի գեղանկարիչների մասին, տարբերակել գունապնակները և այլն: Այն ստեղծվել է զվարճանքը կրթության մեջ մտցնելու համար, ինչպես նաև ցանկացած աշակերտի այս կամ այն հմտություններն առավել ընդգծելու համար: Ստորև ներկայացվում է "Arvest"-ի միջոցով անգլերենի բովանդակահեն ուսուցման մեթոդով իրականացվող դասի պլանը:

**Թեմա՝** "Are You Fond of Art?" **«Արվեստի սիրահար ե՞ս»**

**Դասարան՝** 10

**Դասի տեսակը՝** CLIL (ինտեգրված)

**Դասի նպատակը՝**

- ներմուծել հայ և համաշխարհային կերպարվեստի մասին ինֆորմացված լինելու կարևորության գաղափարը,
- ամրապնդել թեմային համապատասխանող քերականական նյութը,
- ընդլայնել և ամրապնդել «Արվեստ» թեմային վերաբերող թեմատիկ բառապաշարը,
- խթանել թանգարաններ և պատկերասրահներ այցելությանը,
- զարգացնել թեմայի շուրջ հաղորդակցական այնպիսի կարողություններ, ինչպիսիք են ունկնդրումը, մենախոսությունը,
- զարգացնել նկարագրական հմտությունները արվեստի համատեքստում և պատրաստել աշակերտին տվյալ թեմայով հետագա քննարկումներին,
- խթանել աշակերտների առողջ մրցակցության ձևավորմանը:

**Միջառարկայական կապեր՝** Կերպարվեստ, հայ անվանի գեղանկարիչներ

**Դասի ընթացքում կիրառվող մեթոդները և իրականացման եղանակները՝** նկարագրական, պատմողական, բացատրական-զննական, թիմային աշխատանք, ինքնուրույն ճանաչողական գործունեություն, մեջբերումներ

**Անհրաժեշտ պարագաներ՝** «Արվեստ» խաղային քարտեր

**Ակնկալվող վերջնարդյունքներ.**

*Թեմայի ավարտին աշակերտը պետք է իմանա՝*

- թեմային առնչվող բառապաշարը,

- տրված քերականական նյութը,
- ներառված գեղանկարիչների կյանքի և ստեղծագործությունների մասին որոշ մանրամասներ,

*Թեմայի ավարտին աշակերտը պետք է կարողանա՝*

- կատարել ինքնուրույն հետազոտություն և հաղորդակից դառնալ ինչպես սեփական, այնպես էլ համաշխարհային մշակույթին,
- կիսվել կատարած հետազոտության արդյունքում թեռք բերած գիտելիքներով,
- յուրացրած բառապաշարը կիրառել արվեստի գործերի պատկերավոր նկարագրման համար,
- կիրառել անգլերենը որպես գործիք՝ առավել լայն հաղորդակցական հմտություններ ձեռք բերելու համար։

**Դասի ընթացքը՝**

Դասի առաջնային փուլում աշակերտներին ողջունելուց և կազմակերպչական մասն ապահովելուց հետո առաջադրվեց Կոնֆուցիոսի հետևյալ միտքը՝ կարճ քննարկման և թեմային հնարավորինս ինտեգրելու համար. “Everything has its beauty, but not everyone sees it”: Այս փուլում աշակերտներն ազատ էին իրենց կարծիքներն արտահայտելու և փոքրիկ բանավեճ սկսելու. սա իր հերթին հնարավորություն տվեց վերհիշել դասի գաղափարը և գործածել նախորդ դասերի ընթացքում ձեռք բերած բառապաշարը։

Հաջորդ փուլում սովորողներին հիշեցվեց՝ ինչպիսին էին թիմերի կազմերը և բացատրվեց խաղի կանոնները։ Բաժանվեցին խաղաքարտերը, և աշակերտները սկսեցին մեկական մոտենալ սեղանին և նկարագրել իրենց վերցրած քարտի պատկերները։ Շատ կարևոր է նշել, որ այս առաջադրանքը միտված էր նաև խթանելու Present Simple, Present Continuous ժամանակաձևերի և մոդալ բայերի ճշգրիտ գործածմանը, ինչպես նաև թեմայի վերաբերյալ նախորդ դասերին սովորած բառաշարը ակտիվ գործածության մեջ դնելուն։ Աշակերտները խաղի բուն առաջադրանքները կատարելուց բացի հնարավորություն ունեին նաև ուղղել իրենց թիմակից դասընկերների կատարած թիրախային քերականական սխալները, ինչն էլ թույլ տվեց միավորներ չկորցնել։

Դասի ավարտին կատարվեց արդյունքների ամփոփում և գնահատում: Գնահատելիս հիմք ընդունեցինք ինչպես սովորողների հավաքած միավորները, այնպես էլ քերականական նյութի հնարավորինս ճշգրիտ կիրառումը: Այսպիսով, կազմվել էր գնահատման հետևյալ սանդղակը.

1. խաղի պահանջներ կատարում – 5 միավոր. առավելագույն՝ 5 միավոր խաղի արդյունքում 97-120, 4 միավոր՝ 73-96, 3 միավոր՝ 49-72, 2 միավոր՝ 25-48, 1 միավոր՝ 10-24 միավոր հավաքելու դեպքում,
2. բանավոր ներկայացում՝ սահուն և գրագետ խոսք, ճշգրիտ քերականություն – 5 միավոր:

Ընդհանուր առմամբ երկու խմբերն էլ շատ լավ հանդես եկան՝ ոչ միայն կատարելով խաղի պահանջները, այլև ցուցադրելով բարձր մրցակցային ոգի և աննախադեպ ոգևորություն թեմայի վերաբերյալ: Առաջին խմբի անդամները գնահատվեցին գերազանց, քանի որ թիմային աշխատանքի արդյունքում կարողացել էին վաստակել 113 միավոր և գրեթե անսխալ խոսքով հանդես եկել, իսկ երկրորդ խումբը գնահատվեց լավ՝ վաստակելով 76 միավոր և թույլ տալով քերականական որոշ սխալներ: Որպես տնային առաջադրանք հանձնարարվեց աշակերտների կողմից նմանատիպ քարտերի ստեղծումը՝ համաշխարհային գեղանկարիչների կամ արվեստի այլ ճյուղի ներկայացուցիչների մասնակցությամբ:

Ներկայացվող վերջին մեթոդն է **առաջադրանքահենը:** Ինչպես նախորդ գլխում արդեն նշվել է, TBLT-ի նպատակն է օգնել սովորողներին զարգացնել լեզվի անուղղակի իմացությունը, որը թույլ կտա նրանց հեշտությամբ և ինքնաբուխ ձևով մասնակցել իրական հաղորդակցության: Սովորողները վերցնում են թիրախային լեզվի ձևն ու կիրառումը՝ առանց հատուկ կարգավորումներ ստանալու: Ուսուցչի դերն է առաջադրանքներ նախագծել՝ կրկնելով և ստեղծելով իրավիճակներ լեզուների ուսուցման և հաղորդակցության համար, իրավիճակներ, որ գոյություն ունեն դասասենյակից դուրս: Ուսուցիչը պետք է նաև որպես մեկ այլ նպատակ դիտարկի ներկայիս սերնդի հետաքրքրությունների, նախասիրությունների և պահանջների

ներառումը դասավանդման գործընթացում: Ստորև ներկայացվում է 10-րդ դասարանում առաջադրանքահեն մեթոդով անցկացված դասը:

**Թեմա՝** “TV or Not TV?” **«Դիտե՞լ, թե՞ չդիտել. այս է խնդիրը»**

**Դասարան՝** 11- րդ

**Դասի տեսակը՝** TBLT (առաջադրանքահեն)

**Միջառարկայական կապեր՝** Տուրիզմ, Ժամանակակից մասնագիտություններ

**Դասի նպատակը՝**

- սովորողներին տրամադրել հարթակ՝ ինքնարտահայտվելու, անգլերենով իմպրովիզացիաներ կատարելու համար՝ միևնույն ժամանակ նպաստելով բարդույթների հաղթահարմանը,
- ստեղծել իրավիճակներ քերականական նյութի յուրացման համար,
- զարգացնել հաղորդակցական հմտությունները «Ճամփորդություն» թեմայի շրջանակներում

**Դասի ընթացքում կիրառվող մեթոդները և իրականացման եղանակները՝** պատմողական, բացատրական-զննական, թիմային աշխատանք, դերախաղ, զրույց

**Ակնկալվող վերջնարդյունքները՝**

*Թեմայի ավարտին աշակերտը պետք է իմանա՝*

- թեմային առնչվող բառապաշարը,
- տրված քերականական նյութը,
- ներառված տեսարժան վայրերի մասին որոշ մանրամասներ,

*Թեմայի ավարտին սովորողը պետք է կարողանա՝*

- լուծել իր դասարանական միջավայրին համապատասխան և հետաքրքիր առաջադրանքներ,
- օգտագործել անգլերենը՝ իր սովորած գիտելիքներով մյուսների հետ կիսվելու համար,
- կատարել աշխատանքի և ժամանակի արդյունավետ բաշխում,
- մյուս աշակերտների հետ համագործակցել և խմբում լեզվի կիրառման մեջ առավել վստահ դառնալ:

**Դասի ընթացքը՝**

Դասի նախնական փուլում՝ աշակերտներին ողջունելուց և կազմակերպչական մասն ավարտելուց հետո աշակերտները բաժանվեցին 3 խմբերի, և նրանց հանձնարարվեց քարտերի վրա գրի առնել Հայաստանի որևէ տեսարժան վայրի անվանում, դրա մասին ունեցած գիտելիքները ու ամբողջ անհրաժեշտ ինֆորմացիան զբոսաշրջիկի համար: Խմբերից մեկի ընտրությունը կանգ առավ Բյուրականի աստղադիտարանի և Վիկտոր Համբարձումյանի տուն-թանգարանի վրա, մյուսի ընտրությունը ճամփորդական նոր ուղղություն հանդիսացող Գութանասարի և Կեչառիսի վանական համալիրի վրա, իսկ երրորդինը՝ Խոր Վիրապ վանական համալիրի և Տափի բերդի: Աշակերտները ընտրել էին այնպիսի տեսարժան վայրեր, որտեղ արդեն իսկ եղել էին և որոնցից լավ տեղեկացված էին:

Այնուհետև խմբերին տրվեց ժամանակ իրենց բլոգի համար անուն մտածելու, տվյալ վլոգը վարելու և «գիդի» դերը ստանձնելու համար: Առաջին խումբը իր վլոգի համար որոշեց “In Science We Trust”, երկրորդը՝ “Your Trip advisor”, երրորդը՝ “All Roads Lead to Armenia” անվանումները: Կարևոր է նշել, որ բոլոր քննարկումները կատարվում էին անգլերենով և դրանց մասնակցում էին խմբի բոլոր անդամները՝ առաջարկելով իրենց ունեցած գիտելիքները սոցիալական հարթակներում հայտնիություն ունեցող և հաջողության հասած բլոգերների էջերի մասին:

«Եթեր» դուրս գալուց առաջ տրվեց վերջին հրահանգը. թիմի անդամները պետք է հնարավորինս երկար շարունակեին իրար՝ ստեղծելով բարդ նախադասություններ յուրացրած շաղկապների միջոցով: Ամեն խմբի աշխատանքը ունկնդրելիս մյուս խմբերը իրավունք ունեին պասիվ արձագանքելու՝ ինչպես համացանցային կենդանի եթերների մեկնաբանությունների դեպքում է, այն է՝ տեքստային տարբերակով:

**Գնահատում**

Բոլոր 3 բլոգների աշխատանքները դիտելուց հետո սովորողներին հնարավորություն տրվեց քվեարկել առավել ստացված «մեդիակոնտենտի»/ <<media content>> օգտին, այնուհետև գնահատվեց թիրախային քերականական նյութի յուրացման և կիրառման մակարդակը: Միավորների բաշխումը կատարվեց հետևյալ կերպ՝

առավելագույն 5 միավոր «նկարահանած» վլոգի համար, թե որքանով էր այն տեղեկատվական, հետաքրքրիր և ստեղծագործ, և ևս 5 միավոր՝ անգլերեն բանավոր խոսքի սահունության և թիրախային քերականական նյութի կիրառման համար: Սովորողների և հյուրի կողմից միանշանակ հավանության արժանացավ "Your Trip advisor" խմբի կողմից կատարած աշխատանքը, քանզի բուն առաջադրանքը կատարելուց բացի, սովորողները կարողացել էին նաև ճամփորդական փաթեթ ստեղծել զբոսաշրջիկների համար: "Your Tripadvisor" խմբի անդամները գնահատվեցին գերազանց, քանի որ կատարած աշխատանքը համակողմանիորեն գրավիչ էր, գրագետ և ստեղծագործ: Մյուս երկու խմբերը գնահատվեցին «լավ», քանի որ առկա էին քերականական որոշ սխալներ և/կամ աշխատանքը որոշ չափով շեղվել էր բուն առաջադրանքի կատարումից:

Ամփոփելով բոլոր երեք մեթոդների միջոցով ներկայացված դասերը՝ հարկ է ուշադրություն դարձնել մի քանի առանցքային կետերի վրա՝ նախ պետք է վստահ լինել, թե որքանով են դիպուկ և իրատեսական ընտրված նպատակները, և արդյո՞ք դրանք նույնքան ցանկալի և հասկանալի են աշակերտների համար ևս, ստուգել, թե աշակերտները որքանով են ներգրավված տվյալ թեմայի մեջ, և որ ավելի կարևոր է, որքանով է նրանց հետաքրքրում օտար լեզուն տվյալ թեմայի շրջանակներում: Մեթոդները կիրառելիս շատ կարևոր է փորձել հնարավոր բոլոր կողմերով ցույց տալ տվյալ թեմայի և քննարկվող նյութերի բովանդակային տարրն ու անհրաժեշտությունը իրական կյանքում և անհրաժեշտության դեպքում պասիվ աջակցություն ցուցաբերել առաջադրանքների կատարման մնացած փուլերում՝ լինելով վստահ, որ աշակերտները ճիշտ ուղու վրա են: Վերջնական փուլում կատարել գնահատում և ապահովել հետադարձ կապ՝ մեթոդի արդյունավետությունը ստուգելու համար:

**Նախագծահեն, բովանդակահեն և առաջադրանքահեն** մեթոդներվ փորձարարական ուսուցման արդյունքների առավել ցայտուն ներկայացման նպատակով անց է կացվել նաև որակական վերլուծություն:

Որպես ամփոփում կարելի է նշել, որ *աշակերտները կարողացել են* կատարել ինքնուրույն հետազոտություն և հաղորդակից դառնալ սեփական մշակույթին, կիսվել կատարած հետազոտության արդյունքում ձեռք բերած գիտելիքներով, յուրացրած

բառապաշարը կիրառել արվեստի գործերի պատկերավոր նկարագրման համար, կիրառել անգլերենը որպես գործիք՝ առավել լայն հաղորդակցական հմտություններ ձեռք բերելու նպատակով:

Վերջնական աշխատանքի արդյունքները ցույց են տալիս, որ փորձարարական խմբի նախագծահեն ուսուցման որակական արդյունքը փոքր ինչ բարձր է, քան մնացած փարձարարական դասերում: Ստացված արդյունքները ներկայացված են գծապատկերում.



# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, կատարված հետազոտության արդյունքում հաջողվել է՝

- **ներկայացնել** սովորողների ուսումնառության մոտիվացիայի խթանումը և ինքնուրույնության զարգացումը անգլերենի **նախագծահեն, բովանդակահեն** և **առաջադրանքահե**ն ուսուցման գործընթացում զանազան գործնական առաջադրանքների միջոցով,
- **իրականացնել** փորձարարական ուսուցում՝ ուղղված սովորողների ուսումնառության մոտիվացիան խթանելու և ինքնուրույնության զարգացման նպատակով մեր կողմից մշակված առաջադրանքների արդյունավետության ստուգմանը և կատարել ստացված արդյունքների վիճակագրական վերլուծություն:

Ամփոփելով 10-րդ և 11-րդ դասարանների փորձարարական ուսուցման արդյունքները՝ բացահայտեցինք որոշակի խնդիրներ, որոնք հիմնականում պայմանավորված էին սովորողների մոտիվացիայի խթանման արդյունավետ մեթոդների սակավ կիրառութան հետ: Դասերը մեծ մասամբ դասագրքային նյութերով են անցկացվում , այդ պատճառով աշակերտները առանձնապես մոտիվացված չեն: Ուստի ՀՀ հանրակրթական դպրոցում՝ անգլերենի ուսուցման գործընթացում, աշակերտների ուսումնառության մոտիվացիայի խթանումը խիստ անհրաժեշտ է և նպատակային: Այս առումով խնդրի արդյունավետ լուծմանը նպաստեցին մեր կողմից մշակված և ներկայացված փաթեթում ներառված հետաքրքրաշարժ և փոխներգործուն գործնական առաջադրանքները:

**Նախագծահեն** մեթոդով մեր կողմից մշակված և ներկայացված առաջադրանքների կատարումը թույլ է տվել բարելավել սովորողների հետազոտական հմտությունները, օգնել է զարգացնել ստեղծագործ մտքերն ու ձեռնարկել դրանց ինքննուրույն իրականացմանն ուղղված քայլեր, զարգացրել է թիմային աշխատանքի հմտությունները: Սույն մեթոդի կիրառումը, թույլ է տվել իրականացնել աշակերտակենտրոն ուսուցում, տարբերակել և անհատականացնել ուսուցման գործընթացը, ինչն էլ դրականորեն է ազդել աշակերտների ուսումնառության մոտիվացիայի խթանմանը:

ՈՒսուցման **բովանդակահեն** մեթոդով կազմած առաջադրանքները թույլ են տվել լեզուն օգտագործել շրջակա աշխարհի ճանաչման համար, մյուս կողմից, լեզվի ուսուցումը ձեռք է բերել նպատակային ձև, որն օգնել է զարգացնել բանավոր խոսքի հմտությունները, մղել սովորողներին ինքնաբուխության՝ ինչն էլ ակնհայտորեն նպաստել է ուսումնառության մոտիվացիայի խթանմանը:

ՈՒսուցման **առաջադրանքահեն** մեթոդով կազմած և ներկայացրած առաջադրանքների կատարումը սովորողներին հնարավորություն է տվել զարգացնել արագ կողմնորոշվելու, ստեղծագործ մտքերի գեղեցիկ ներկայացման հմտությունները:

Այսպիսով, ոլոր երեք մեթոդներով իրականացված դասերի դեպքում էլ կարելի է արձանագրել աշակերտների ներգրավվածության բարձր մակարդակ և հետագայում ևս այսօրինակ աշխատանքների առավել հաճախակի կատարման մեծ ցանկություն՝ ինչն էլ վկայում է աշակերտների ուսումնառության մոտիվացիայի խթանման բարձր մակարդակի մասին:

# ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ


1. Ковылева Ю. Э. Развитие мотивации деятельности и ключевых компетентностей учащихся // Муниципальное образование: инновации и эксперимент. - 2009.
2. Brunetti, A. J., & Petrell, R. J., & Sawada, B. (2003). Team project-based learning enhances awareness of sustainability at the University of British Columbia, Canada. International Journal of Sustainability in Higher Education, 4, 210.
3. Fried-Booth, D. L. (1997). Project work. (8th Ed.) Oxford: Oxford University Press.
4. John Dewey, *Democracy and Education: An Introduction to the Philosophy of Education* (New York: Macmillan, 1916).
5. Moss, D., & Van Duzer, C. (1998). Project-based learning for adult English learners. Eric. Digest.


# ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀՂՈՒՄՆԵՐ


1. ‘What is PBL?’, *Buck Institute of Education: PBL Works Online* (2020).// https://www.pblworks.org/what-is-pbl, 21.09.21
2. John Dewey, *Democracy and Education: An Introduction to the Philosophy of Education* (New York: Macmillan, 1916). //https://archive.org/details/democracyandedu00dewegoog/page/n6/mode/2up?view=theater, 20.08.21
3. Content and Language Integrated Learning // https://www.teachingenglish.org.uk/article/content-and-language-integrated-learning, 18.09.21